«ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆԻՐԱՎՈՒՆՔ»
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ECOLOGICAL RIGHT"
ENVIRONMENTAL
NON-GOVERNMENTALORGANIZATION

ՀՀ ք. Երևան, Ավան-Առինջ 2/13շ., 30բն.
Հեռ՝ +37410621739; բջջ. +37491451320
e-mail:art.grigorian@gmail.com

Avan-Arinj 2/13, apt 30, Yerevan, Armenia
tel: +37410621739; mob: +37491451320
e-mail: art.grigorian@gmail.com

17.02.2014թ.

ՀՀԱրագածոտնի մարզի Մելիքգյուղ համայնքի ղեկավար
Հակոբ Մկրտչյանին

Հարցում

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածները՝ խնդրում եմ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված 5-օրյա ժամկետում տեղեկատվություն տրամադրել հետևյալի մասին՝

1. Որքա՞ն գումար է «Մեգո գոլդ» ընկերությունը 2013 թվականին վճարել համայնքի բյուջե Թուխմանուկի ոսկու հանքավայրի շահագործման համար համայնքից վարձակալված տարածքների համար.

2. Համաձայն 26.12.2013թ. Ձեր կողմից ներկայացված գրության, «Մեգո գոլդ» ընկերության կողմից համայնքի բյուջե է վճարվել հետևյալ չափի գումար՝
2006թ.՝ 900,000 դրամ,
2007թ.՝ 900,000 դրամ,
2008թ.՝ 900,000 դրամ,
2009թ.՝ 900,000 դրամ,
2010թ.՝ 14 մլն. դրամ,
2011թ.՝ 14 մլն. դրամ,
2012թ.՝ 14 մլն. դրամ:

Խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել, թե ինչպե՞ս են ծախսվել «Մեգո գոլդ» ընկերության կողմից համայնքին վճարված գումարները ըստ տարիների՝ 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012 և 2013 թվականների ընթացքում (թվարկել այն աշխատանքները, որոնք կատարվել են համայնքում այդ գումարներով).

3. Արդյո՞ք Մելիքգյուղ համայնքի նախորդ ղեկավարից ստացել եք հաշվետվություն իր պաշտոնավարման տարիներին «Մեգո գոլդ» ընկերության կողմից համայնքին վճարված գումարների ծախսային մասի վերաբերյալ: Խնդրում եմ տրամադրել այդ հաշվետվթյան պատճենը:

«Էկոլոգիական իրավունք» հասարակական կազմակերպության

նախագահ՝ Արթուր Գրիգորյան